

ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական
համայնքի ղեկավար Գ. Դանիելյան
2014թ. 2-րդ կիսամյակի կատարած աշխատանքների

Հաշվետվություն

Մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
աշխատակից Արմեն Դարբինյանի, համայնքի ավագանու և 150 բնակիչների:

23-01-2015թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի
ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից
բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման
մասին», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի
աշխատակազմի, անագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող
հիմնադրված աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված
իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

Հիմնական նպատակը համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է,
որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական
խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2014թ. 2-րդ կիսամյակի
ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել
Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աջակցությամբ և համայնքի ավագանու աննօրյա
նպատակով վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու
պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ,
որոնք ըստ բնագավառների ներկայացնում են Ձեզ:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ

Գյուղապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական
աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Շտանողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև
կազմակերպվում է գյուղ. մթերքների մշակման ուղղությամբ կատարվող աշխատանքներին:

Համայնքը ունի շուրջ 1102 գոտի խոշոր եղջերավոր, 1500 մանր եղջերավոր անասուններ
և 800 գոտի խոզ: Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, բանջար-
բուստանային կուլտուրաների, արվույտի, պտղաբուծության և խաղողի մշակությամբ:

Համայնքի հողերից շուրջ 200 հա չի մշակվում, որի հիմնական պատճառներն են՝

1. Հողատնտեսականությունը բացակայում են համայնքից
2. Թունաբիմիլիտետների բարձր սակագները և անորակությունը
3. Ոռոգման ջրի խիստ սակավությունը

Որոշողության կենտրոնում է պահվում բերրի իրացման, գյուղատնտեսական
մշակաբույսերի փաստուտների դեմ պայքարի աշխատանքները և պարբերաբար
կատարվում են ներանտեսային ոռոգման ցանցի մտքըման աշխատանքները:

Մարզպետարանից համայնքին հատկացվել է 185 տոննա սելիտրա, 48 տոննա հացահատիկի սերմացու է դիզելային վառելանյութ:

Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում են բոլոր հակահամաճարակային միջոցառումները կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ:

Հանողական և սեռատնտեսիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հատարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունեության վրա: Ներկայումս համայնքում գործում է 16 առևտրի օբյեկտ:

Հողաշինության և օդաօդագործման բնագավառ

Անկարգա ուղղորդմամբ կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման վրա:

Ապահովվում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների պահպանումը, շահագործումը և նորոգումը:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

Գառափարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափազանց և սահմանների ճշգրտում և աշխատանքներ, արվել են ճշտված իրավիճակային հատակագծեր: Պարբերաբար կատարվում է խելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:

Սահմանվում է հսկողություն խելու ջրի, որակի, ինչպես նաև վարակազերծման նկատմամբ:

Պարբերաբար կատարվում են աղբահանման աշխատանքներ:

Մշակույթի և երևտասարդության, կրթության, առողջապահության սպորտի, սոցիալական ծառայության բնագավառ

Հատուկ ուշադրություն է դարձվում կրթության, մշակույթ և մարզական օջախների ուսցիոնալացմանը և նպատակային գործունեությանը:

Համայնքում գործում է 2 միջնակարգ դպրոց:

Մշակերանների թիվը՝ 643:

Աշխատողների թիվը՝ 110:

Համայնքում գործում է նաև 1 երաժշտական դպրոց, որն ունի 70 սան:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:

Համայնքի մանկապարտեզ են հաճախում 102 երեխաներ: Մեկ երեխայի հաշվով փառասցի ծախսը կազմել է մոտավորապես 6000 դրամ, սակայն ծնող գումարը նախատեսվել է 2000 դրամ, մնացած ծախսերը կատարվել է գյուղապետարանի կողմից:

Մեծ ուշադրություն է դարձվում թոշակատուներին՝ կազմակերպվել է տատիների և գրառվիների համար Էրզրուրսիա դեպի Սևան: Համայնքում կազմակերպվել է Մաճաթի տոն և Անանուրյա միջոցառումները, որի ընթացքում 500 երեխաներին բաժանվեցին տոպրակներ:

Մշակույթի տանը գործում են բմբջամարտի, պարի և նկարչական խմբակներ:

Համայնքում գործում է « Խնամակալության և հոգևարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումը: Ի տրամադրություն մեզ՝ համայնքում նման երեխաներ չկան, պարբերաբար դրամական օգնություն է ստանում երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաներին:

Ֆինանսական աջակցություն է տրամադրվել համայնքի սոցիալապես անապահով 41 ընտանիքների: ՄարիաջանՏուրի ընտանիքների տրվել է միանվագ դրամական օգնություն 50000- ական դրամիչափով:

Համայնքում հաշվառված են 657 թոշակատուներ, 60 նպաստառու ընտանիքներ:

Համայնքի բնիհանուր սնանկությունների թիվը կազմում է 1944 , որից առկա՝ 1820 :

Առկա բնակչության թիվը՝ 6167:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը գորակոչի նկատմամբ:

Ֆինանսական բնագավառ

Աստիճանաբար բարելավվում է համայնքի ֆինանսական կացությունը՝ իրականացնելով հարկային և ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի և վճարների սահմանման և գանձման ձևով բազմաբնույթություն:

2014թ. 2-րդ կիսամյակում համարագրված եկամուտները

անվանումը	2014 թվական		Գատարողական
	պլան	փաստացի	%
Հողի հարկ	18284.9	18308.3	100.1
գույքահարկ	8585.7	9080.5	105.8
Տեղական տուրք	450.0	279.3	62.1
Հողի վարձավճարներ	1550.0	1661.2	107.2
Պաշտոնական բնթացիկ տրանսֆերտներ	82812.5	82812.5	100
Այլ եկամուտներ	50.0		
<i>Ընդամենը</i>	<i>111733.1</i>	<i>112141,8</i>	<i>100.4</i>

կատարված ծախսերը

	Ծախսերի անխնամը	2014թ տարեկան պլան	Փաստացի
1	Ընդհանուր բնույթի ծախսեր	48427.2	42975.4
2	Տնտեսական հարաբերություններ	2000.0	422.4
3	Շրջակա միջավայրի պահպանում	3900.0	3692.0
4	Բնակարանային շինարարություն	4000.0	3954.9
5	Առողջապահություն	600.0	600.0
6	Հանդիսություններ	21840.0	19789.0
7	Կրթություն	19465.9	17722.7
8	Սոցիալական պաշտպանություն	11500.0	10190.0
	<i>Ընդամենը</i>	<i>111733.1</i>	<i>99346.4</i>

*Առաջնային և համայնքի համար գլխավոր
խնդիրներից են*

1. Երաժշտական դպրոցի շենքի վերանորոգումը
2. Ուղղման ներսնուտեսային ցանցի վերանորոգումը
3. Արհեստագործական ճանապարհների վերանորոգումը

2014թ. բնթացքում համայնքի առջև ծառայած խնդիրների լուծման և համայնքի վիճակը բարելավելու համար հաշվի կառնվան համայնքի բնակիչների կողմից առաջ քաշված բոլոր առաջարկություններն ու հիմնախնդիրները: Ապատակային կօգտագործվեն համայնքի բյուջեի միջոցները, բարձրացնելով բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը և որակը, համայնքապետարանի և ձեռնարկությունների աշխատանքների արդյունավետությունը:

ՄՐԳԱՇԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ.ՂԱՆԻԵԼՅԱՆ